Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Կրտսեր դպրոցականների համագործակցային ուսուցման գաղափարախոսությունն ու մեթոդները

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Մանուշակ Հովհաննիսյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ1

Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը……4

Գլուխ 2. Կրտսեր դպրոցականների համագործակցության կարողության ձևավորումը

2.1 Համագործակցային ուսուցում……..……..7

2.2 Կրտսեր դպրոցականների համագործակցելու կարողությունը և ձևերը……..11

Գլուխ 3

Հետազոտական մաս……..……..……13

Եզրակացություն……...17

Օգտագործված գրականության ցանկ……..……..18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր հասարակության մեջ յուրաքանչյուր գործունեություն իրականացնելիս անհրաժեշտ է ունենալ մի շարք հատկանիշներ, կարողություններ և հմտություններ: Որոնց ձևավորումը պետք է իրականցնել վաղ տարիքից: Գործունեություն ծավալելիս իր մեծ և ազդեցիկ նշանակությունն ունի համագործակցելու կարողությունը, որի միջոցով մարդը կարող է փոխանակել բազում գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,զարգացնել ընդունակությունները, խմբում սոցիալականացվել և ստանձնել տարաբնույթ դերեր, ձեռք բերել հաղորդակցական որակներ, լսելու և սեփական կարծիքը արտահայտելու կարողություն::

Ուսումնասիրության թեման է կրտսեր դպրոցականների համագործակցային ուսուցման գաղափարախոսությունն ու մեթոդները:

Հետազոտականի նպատակը: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ինչ միջոցներով, մեթոդներով և տեխնոլոգիաներով կարելի է կրտսեր դպրոցականների մոտ զարգացնել համագործակցելու կարողությունը, ինչպես ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ խմբում, դասարանում կարողանա համատեղ աշխատել մյուս երեխաների և ուսուցչի հետ: Եվ այդ աշխատանքների ընթացքում ներակայցնելուսուցման մեջ համագործակցելու արդյունքը:

Հետազոտականի խնդիրները:

1. Բացահայտել համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակները, վարժությունները և առաջարկությունները
2. Ծրագրել դասարանի ակտիվ ներգրավվածությունը ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում է և յուրացվում է հենց աշակերտի միջոցով:
3. Կազմակերպել համատեղ աշխատելու կարողությունների ձևավորվամ և շփման հմտությունները:
4. Զարգացնել աշակերտների խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները, բանավոր խոսքի կարողությունները:

ԳԼՈՒԽ 1.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կրթության բոլոր օղակների միջև գոյություն ունի տրամաբանական կապ: Այն ցայտուն ձևով դրսևորվում է հատկապես մանկապարտեզի և դպրոցի միջև: Երեխաների նախապատրաստումը դպրոցական ուսուցմանը մի կողմից ենթադրում է երեխաների զարգացվածության, կրթության այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է դպրոցի պահանջներին, մյուս կողմից էլ՝ դպրոցի հիմնվելը նախադպրոցականի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և որակների վրա: Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, սոցիալական պայմանների ու գործունեության ձևերի անցում, հետևաբար պահանջում է դպրոցական ուսուցմանը երեխաների նախապատրաստման անհրաժեշտություն: Հոգեբանության մեջ գործածվում են 2 հիմնական հասկացություններ՝ 1) դպրոցական ուսուցման պատրաստականություն, 2) պատրաստակամություն: Առաջինը ենթադրում է երեխաների ընդհանուր զարգացվածության, դաստիարակվածության, կրթվածության առկա մակարդակը, որով նրանք մուտք են գործում դպրոց: Իսկ երկրորդը՝ պատրաստակամությունը, նկատի է ունենում երեխաների սովորելու ցանկությունը և պահանջմունքը: Տարբերում ենք երեխաներին դպրոցին նախապատրաստելու 2 ասպեկտ՝ *հատուկ կամ մասնավոր նախապատրաստում* և *ընդհանուր նախապատրաստում*:

Հատուկ նախապատրաստումը նախատեսում է երեխաների զինումը այնպիսի գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով, որոնք անհրաժեշտ են դպրոցում մաթեմատիկա և հայոց լեզու ուսումնասիրելու համար:

Ընդհանուր նախապատրաստման մեջ տարբերում ենք հոգեբանական և ֆիզիկական նախապատրաստումը: Վերջինս ենթադրում է երեխայի առողջության և ֆիզիկական զարգացվածության բավարար մակարդակը, որն անշուշտ կարևոր է դպրոցում հաջող սովորելու համար:

Բնականաբար մեզ հետաքրքրում է դպրոցական ուսուցման հոգեբանական պահը: Այն բավականին բարդ մի կազմություն է, որը նկատի է ունենում երեխայի անձնային, ինտելեկտուալ և կամային ոլորտների բավականին բարձր մակարդակը, որոնք հավասարապես կարևոր են դպրոցում արդյունավետ ուսումնական գործունեություն ծավալելու, սոցիալական նոր պայմաններին արագ հարմարվելու, հարաբերությունների նոր ոլորտ առանց դժվարությունների ընդգրկվելու համար: Թվենք այս ոլորտներն առանձին-առանձին.

Դպրոցական ուսուցման անձնային պատրաստվածությունը: Բոլորին քաջ հայտնի է, թե որքան դժվար է երեխային սովորեցնել, երբ երեխան ինքը դա չի ցանկանում: Հարկավոր է, որ երեխան ունենա ցանկություն, պահանջմունք դպրոցում սովորելու, այսինքն նրանում ձևավորվի դպրոցականի *ներքին հոգեբանական դիրքորոշումը*: Իսկ վերջինիս ձևավորմանը մեծապես նպաստում է մոտ հարազատների, մեծահասակների ավելի պատասխանատու վերաբերմունքն ուսումնական գործունեության նկատմամբ, քան խաղի:

Հաջորդը *երեխայի վերաբերմունքն է դպրոցի նկատմամբ*:

Կարևորությունը բարձրանալու տարիքային նոր աստիճանի, փոքրերի աչքում մեծանալու և մեծերի հետ հավասարվելու առումով:

Դպրոցականի ներքին հոգեբանական դիրքորոշման հիմնախնդիրներով զբաղվել է ռուս հոգեբան Բոժովիչը: Նա գտնում էր, որ այդ դիրքորոշումը միանգամից չի ձևավորվում: Այն աստիճանաբար է ստեղծվում՝ դառնալով ավելի բովանդակալից: Այսպես, դպրոցական ուսուցման սկզբնական շրջանում երեխայի համար հոգեբանական դիրքորոշումն այնքան էլ կարևոր չէ, քանի որ նրա հիմքում ընկած չեն իմացական, ճանաչողական, գիտակցական հետաքրքրությունները: Երեխաներին ամենից շատ գրավում են դպրոցական կյանքի արտաքին գործոնները՝ պայուսակը, շենքը, համազգեստը, նոր իրավիճակները, նոր ընկերներ ձեռք բերելու հանգամանքը: Միայն աստիճանաբար, երբ երեխան տիրապետում է գեղեցիկ գրելու հմտությանը, ձեռք է բերում որոշակի գիտելիքներ շրջապատող կյանքի և բնության վերաբերյալ, նրանում ձևավորվում է դպրոցականի ներքին հոգեբանական դիրքորոշումը, սովորելու ցանկություն, այս կամ այն առարկայի գծով հետաքրքրվածություն:

Հոգեբանական պատրաստվածության մեջ բավականին կարևորվում է նաև *երեխայի անցումը սոցիալական նոր կարգավիճակի*, նրա ձգտումը սոցիալական նոր դիրքի, որը կրտսեր դպրոցական տարիքում մի շարք հոգեբանական առանձնահատկությունների նախադրյալ է հանդիսանում, մասնավորապես՝ ուսումնական գործունեության նկատմամբ պատասխանատվության զգացումը, երբ երեխան կատարում է ոչ միայն իրեն հետաքրքիր հանձնարարություններն ու տնային առաջադանքները, այլև մնացած բոլոր հանձնարարությունները, որոնք նա պարտավոր է կատարել, որպես աշակերտ:

Դպրոցին *անձնային նախապատրաստման* գործում անչափ կարևոր է նաև երեխայի վերաբերմունքն ուսուցչի, համադասարանցիների և ինքն իր նկատմամբ: Արդեն իսկ նախադպրոցական տարիքից երեխայի մեջ հարկավոր է ձևավորել մեծահասակների հետ արտահրավիճակային շփումները /Լիսինա/, երբ երեխաների

համար մեծահասակը հեղինակություն է, նրա պահանջներն անվերապահորեն կատարվում են և նրա դիտողություններից երեխան չի վիրավորվում: Եթե այս առումով երեխան նախապատրաստված է, նա համապատասխանաբար ընկալում և ընդունում է ուսուցչի դերը, նրա մասնագիտական դիրքը, հեշտանում է շփումը դասի ժամանակ, երբ բացառվում է էմոցիոնալ շփումը երեխայի և ուսուցչի միջև, երբ երեխան չի կարող խոսել կողմնակի բաների մասին և պետք է կենտրոնանա միայն ուսումնական գործընթացում: Նման դեպքերում երեխաները ճիշտ են հասկանում և ընկալում ուսումնական գործունեության պայմանականությունը և ուսուցչի հետ շփման գործընթացում դժվարություններ չեն ունենում:

Երեխան որոշակի դժվարություններ է ունենում նաև համադասարանցինեի հետ շփվելիս: Այս առումով բավականին փորձեր են անցկացվել, որոնք ցույց են տալիս, որ մանկապարտեզում երեխաներն ավելի լավ են շփվում միմյանց հետ, քան դպրոցական ուսուցման առաջին ամիսներին, որովհետև գալով դպրոց, երեխան հանդիպում է իր համար բոլորովին նոր, անծանոթ երեխաների, որոնց հետ նա պարտավոր է շփվել, քանի որ ուսումնական գործունեությունն է այդպես պահանջում: Նրանք պետք է համատեղ սովորեն, քննարկեն, հանձնարարություններ կատարեն: Այս առումով որոշակի ժամանակ է հարկավոր, որ երեխան հարմարվի և ծանոթանա իր նոր շրջապատին:

Դպրոցին հաջող նախապատրաստումը ենթադրում է նաև *երեխայի վերաբերմունքնինքն իր նկատմամբ,* իր գործունեության արդյունքների, սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ, այսինքն, երեխայի ինքնագիտակցության մակարդակը: Եթե երեխան ասում է, որ իր կատարած աշխատանքն ամենալավն է, ապա մենք չենք կարող խոսել դպրոցական ուսուցմանը հաջող նախապատարաստման օգտին: Բարձրացված ինքնագնահատականն առավել բնորոշ է նախադպրոցականին:

Հոգեբանական պատրասվածությունն իր մեջ ընդգրկում է նաև *երեխայի կամային ոլորտի զարգացվածության որոշակի մակարդակ*:

ԳԼՈՒԽ 2

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Համագործակցային ուսուցում

Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները փնտրում են մանկավարժները: Համագործակցության տեխնոլոգիան համարվում է համաշխարհային մանկավարժության որպես առավել հաջող այլ ընտրանք ավանդական մեթոդների նկատմամբ:

Համագործակցային ուսուցումը այլ ընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

2. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
3. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև

աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

4. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հոգողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողություններ և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն / ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է , որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ այնպես էլ տարբերություններ: Դրանք են.

Խճանկար

- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգ րոպեանոց ազատ շարադրանք

Ուսուցչի պարտականություններն են.

- Դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում
- Սովորողների խմբերի ձևավորում
- Սովորողների տեղաբաշխում
- Առաջադրանքների ներկայացում և բացատրում
- Խմբային աշխատանքների հսկողություն և միջամտություն
- Գնահատում

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- Անձի զարգացումը և անհատական ձևավորումը
- Հոգեբանական և ֆիզիզկական առողջության ապահովումը
- Սթրեսի հաղթահարումը
- Շրջապատողներ հետ առողջ փոխհարաբերությունների կառացումը

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտներ առաջընթացը :Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանելու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՝ առանձին աշակերտների, և՝ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw):

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև վերամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկար փուլերն են.

- Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- Աշխատանք փորձագիտական խմբում,
- Աշխատանք ուսումնական խմբում,
- Ավարտական աշխատանք,
- Ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում:

Սա, խճանկար մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող միշարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք:

Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում ենք աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

2.2 Կրտսեր դպրոցականների համագործակցելու կարողությունը և ձևերը

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսուցումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցության տեխնոլոգիան (ուսուցման փոխգործակցությամբ) հիմնված է մեթոդական տարբեր ռազմավարությունների, իրավիճակների օգտագործման, մոդելավորման, իրական շփումների ու փոխգործակցության կազմակերպման հիման վրա, սովորողներին՝ կրտսեր դպրոցականներին (զույգերով, փոքր խմբերով) համատեղ լուծելու հաղորդակցական խնդիրները:

Ուսումնական համագործակցությունը իրենից ներկայացնում է լայն ցանց փոխգործակցության

– ուսուցիչ – աշակերտ – աշակերտները,

– աշակերտ – աշակերտ (զույգերով),

– խմբային փոխգործակցությունը, ուսումնական կոլեկտիվներ,

– ուսուցիչ – ուսուցչական կոլեկտիվը,

– աշակերտ ինքն իր հետ

Որպես ավանդական տեխնոլոգիաներ հիմնականում օգտագործում են ուսուցման փոխգործակցության ձևերը.

– խմբակային;

– խաղային:

Համգործակցային ուսուցման եղանկաները

Ուսուցման համագործակցային եղանակներից յուրաքանչյուրն իր կիրառությունն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում:

Ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- աշխատանքի համար հատկացված ժամանակը,
- վարժությունների տեսակները,
- դասերի տեսակները,
- բովանդակությունը,
- փոխկախվածության աստիճանը

Կարևոր է հաշվի առնել ուսուցման համագործակցության սկզբունքները:

1. Սովորողները աշխատում են խմբերով (4-6 աշակերտ), երեխաների ունեում են մրցակցական տարբեր մակարդակներ:
2. Խմբին տրվում է մեկ առաջադրանք, բայց դրա կատարման համար նախատեսվում է դերերի բաշխում խմբի անդամների միջև.
3. Խմբի անդամ, որը պետք է դասարանում ներկայացնի բոլոր հանդիպած խնդիրները, որին կարող է ընտրել ուսուցիչը կամ թիմի անդամները.
4. Գնահատվում է աշխատանքը, մեկ աշակերտին գնահատում են ամբողջ խմբի համար: Կարևոր է, որ գնահատվում են ոչ այնքան գիտելիքը, որքան սովորողների ջանքերը և համատեղ աշխատանքը:

Ա. Բ. Վորոնցովը հատկացնում է խմբում համատեղ ուսումնական գործունեության 5 տարրերի մոդելները:

1 – դրական փոխկախվածությունը

2 – մասնավոր համագործակցությունը, որի դեպքում երեխաները պետք է շփվել միմյանց հետ,օգնեն միմյանց խնդիրների լուծման, հանձնարարականների կատարման հարցում

3 – անհատական պատասխանատվությունն է, որի յուրաքանչյուր աշակերտ անձամբ պատասխանտու է իր աշխատանքի համար,

4 – հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշակերտներին, որպեսզի նրանք օգտագործեն իրենց ուսումնական գործընթացում;

5 – համատեղ գնահատականը ընթացքի աշխատանքների համար, որի դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ պետք է պարբերաբար ամփոփի կատարված աշխատանքը, արդյունավետ գործելու համար:

Գլուխ 3
Հետազոտական մաս

Կրտսեր դպրոցականների մոտ համագործակցության կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է նրանց հետ աշխատել մի շարք մեթոդներով և տեխնոլոգիաներով, որոնք նրանց մոտ կզարգացնեն համագործակցելու, համատեղ աշխատելու, գիտելիքների, կարողությունների և հմտությունների փոխանակման, հաղորդակցման ընդունակությունն:

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար:Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսուցման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը,

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

ե) սինթեզը,

զ) գնահատումը:

Համագործակցային քննարկում

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

ա) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում: Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.

բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը **կողմ** փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.

ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված ,քննարկման խաղանիշերն (3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

է) Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն

օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Դերախաղը՝ որպես ուսուցման եղանակ

Ստեղծագործական դերախաղը գիտելիքն անձնավորելու փորձ է:

Որպես հիմնական հասկացություններ հանդես են գալիս **դերը** և **նույնացումը**: Դա նշանակում է, որ աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում: Կախված առաջադրանքից՝ նրանք կարող են մարմնավորել հենց իրենց՝ որոշակի իրավիճակում, կամ էլ որոշակի բնութագիր ունեցող: Բայց նույնիսկ վերջին դեպքում աշակերտի անձը փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ: Ահա թե ինչպես, իդեալական դեպքում, նրանք կարող են հասկանալ խնդիրը սեփական փորձառության միջոցով:

Տարբեր իրավիճակային վարժությունների համար անհրաժեշտ է ցուցաբերել էմպատիայի տարբեր աստիճաններ: Օրինակ՝

ա) էմպատիան բարելավելուն ուղղված պարզ վարժություններ,

բ) դիլեմաներ, որոշումների կայացում,

գ) համատեղ որոշումներ,

դ) ներկայացման պատրաստում,

ե) հայտնի պատմությունների ներկայացում դերախաղի միջոցով,

զ) իրավիճակային խաղեր,

է) ուսումնավարժանք,

ը) լուսանկարների պաստառ/հավաքածու,

թ) դատախաղ,

ժ) բանավեճ:

Դերախաղի տեղն ուսման գործընթացում

Դերախաղի, ինչպես նաև գործնական աշխատանքի վրա հիմնված մեթոդի դեպքում հարց է ծագում՝ արդյոք այն պետք է նախորդի, թե՞ հաջորդի ուսուցչի կողմից նոր թեմայի ներկայացմանը (եթե, իհարկե, նման ներկայացումը տեղի է ունենում դասի ընթացքում): Համաձայն ավանդական տեսակետի, դերախաղը խաղ է, որը պետք է անցկացնել միայն լուրջ աշխատանքն ավարտելուց հետո. ավելին, անհնար է որևէ բան ներկայացնել, երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութի փաստերը:

Կազանի մեթոդով համագործակցային ուսման եղանակը

Դոկտոր Սպենսեր Կագանի, Համագործակցային ուսուցումե աշխատությունը հրապարակվել է 1985 թվականին (Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ. Kagan Publishing): Այս գիրքը համագործակցային ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է: Այն չի առնչվում որևէ այլ մեթոդի. դրանում ներկայացված մեթոդը հայտնի է որպես Կագանի մեթոդ: Այն մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում ըստ աշակերտների կարողությունների: Կագանի մեթոդի հիմքում դրված է համագործակցության գաղափարը, և այդ մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները: *Ուսուցանում–ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝*

- Տվյալ առարկայի նպատակը՝ դասավանդվող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական հմտությունները:
- Սոցիալական նպատակը՝ առաջինը, աշակերտները պատասխանատվություն են ստանձնում: Երկրորդ, նյութը դասավանդվում է համագործակցության վրա հիմնված տարբեր եղանակներով, ինչն իր հերթին զարգացնում է նաև աշակերտների շփման հմտությունները:

Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է: Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ: Ուսուցիչն աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման հանգեցի այն եզրակացությանը, որ դպրոցում և հատկապես կրտսեր դպրոցում անհրաժեշտ է աշակերտների մեջ ձևավորել համագործակցելու հմտություններ, քանի որ հենց այդ տարքիքից է պետք երեխայի մեջ սերմանել համատեղ աշխատելու, օգնելու, ուղղորդելու հատկանիշները:

Այսպիսով, ուսումնական համագործակցությունը նպաստում է գիտելիքների և հմտությունների լիարժեք ձևավորմանը:

Հետևաբար, երբ օգտագործվում է և ճիշտ է կազմակերպվում համատեղ գործունեությունը (համագործակցությունը) ուսուցչի և սովորողների իմացական, ընկալման մակարդակը բարձրանում է, բարձրանում է ուսուցման որակը, հետաքրքրությունն աճում է ուսուցման նկատմամբ, որը նպաստում է կրթական իրավասության ամրապնդմանը կրտսեր դպրոցականների համար :

«Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և իր աշխատանքը և իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:»

Լև Տոլստոյ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրովսկի Ա. Վ.«Տարիքային և մանկավարժական հոգեբանություն» Երևան 1977 էջ 115-126

2. Անդրևա Գ. Մ. «Միջանձնային հարաբերությունների հոգեբանություն» Հոգեբանության հարցեր – 1992. – №2..

3. Բաբանսկի Յ. Կ. «Մանկավարժական գործընթացի օպտիմալացում»

4. https://interactive-plus.ru/ru/article/14743/discussion_platform

5. http://etm.gspi.am/wp/wp-content/